



Center for European Studies



Global Campus
Caucasus

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՄԱՐԱՆ

ՆՈՐԱՆԿԱԽ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

(ՀԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ,
ՌՈՒՍԱՍՏԱՆ, ԲԵԼԱՌՈՒՍ, ՂԱԶԱԽՍՏԱՆ,
ՂՐՂՋՍՏԱՆ, ՈՒԿՐԱԻՆԱ, ՄՈԼԴՈՎԱ)

Խմբագիր՝ ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Europe
South-East Europe
Latin America-
Caribbean

Asia-Pacific
Caucasus
Arab World
Africa

This document has been produced with the financial assistance of the European Union and as part of the Global Campus of Regional Masters' Programmes and Diplomas, managed by EIUC.

The contents of this document are the sole responsibility of the Yerevan State University and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union or of EIUC.

POLITICAL STABILITY OF NEWLY INDEPENDENT COUNTRIES UNDER CONDITIONS OF MODERNIZATION

*(Armenia, Georgia, Azerbaijan, Russia,
Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine, Moldova)*

Edited by ARUSYAK ALEKSANYAN

YEREVAN
YEREVAN STATE UNIVERSITY PRESS
2018

**ՆՈՐԱՆԿԱԽ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

*(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս,
Ղազախստան, Դրոզդստան, Ուկրաինա, Մոլդովա)*

Խմբագիր՝ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

Հ ՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Ն 930

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհրդի և Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի խորհրդի որոշումներով*

**Ն 930 Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիակա-
նացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռու-
սաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլ-
դովա) / Խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 384 էջ:**

Աշխատությունը Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանու-
թյամբ իրականացված համեմատական վերլուծություն է, որը դիտարկում է նորանկախ
երկրների քաղաքական համակարգերի և վարչակարգերի՝ Հայաստանի, Վրաստանի,
Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Մոլդո-
վայի փոխակերպումները և արդիականացման հիմնական փուլերը: Աշխատությունն
ընդգրկում է նորանկախ 9 երկրի կայունությունը պայմանավորող քաղաքական, տնտեսա-
կան և սոցիալական գործընթացների ու իրավիճակների համակողմանի ուսումնասիրու-
թյունները 2000-2017 թվականներին: Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի
մեթոդաբանության շրջանակում կատարվել են ներերկրային և միջերկրային վերլուծու-
թյուններ: Ներերկրային վերլուծությունները վերաբերում են 2000-2017 թվականներին նո-
րանկախ 9 երկրի կայունության վրա ազդող քաղաքական, տնտեսական և սոցիալական
գործոնների միտումներին: Միջերկրային վերլուծությունը դիտարկում է 2017 թվականի քա-
ղաքական կայունության համեմատական ցուցանիշները: Սույն աշխատությունը նախա-
տեսված է համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների գիտնականների,
փորձագետների և ուսանողների համար:

Հայաստանի ազգային գրադարանի համահավաք գրացուցակ:

*Այս գրքի փվյալները գրանցված են համահավաք գրացուցակում և հասանելի են Հայաստանի ազգային
և Երևանի պետական համալսարանի գրադարաններից:*

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2328-2

© Հեղինակներ, 2018

© ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2018

© ԵՊՀ հրատարակչություն, 2018

Խմբագիր և հետազոտական խմբի գիտական ղեկավար՝

Արուսյակ Ալեքսանյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս, փորձագետ, քաղաքական գիտությունների թեկնածու

Գիտահետազոտական խմբի անդամներ՝

Աշոտ Ալեքսանյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Արտյոմ Տոնոյան ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, ադրբեջանագետ

Կարոլինա Դոդոն ԵՊՀ «Մարդու իրավունքները և ժողովրդավարացումը Կովկասում» ծրագրի մագիստրոս, փորձագետ

Մարիամ Խիզանաշվիլի ԵՊՀ «Մարդու իրավունքները և ժողովրդավարացումը Կովկասում» ծրագրի մագիստրոս, փորձագետ

Նազիրա Իբրահիմ Կիզի ԵՊՀ «Մարդու իրավունքները և ժողովրդավարացումը Կովկասում» ծրագրի մագիստրոս, փորձագետ

Հետազոտական խմբի խորհրդատու՝

Վլադիմիր Մարտիրոսյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝

Գարիկ Քեոյան ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալեքսանդր Մարգարով ԵՊՀ պրոռեկտորի տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Head of the Research Team, Editor

Arusyak Aleksanyan Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science

Research Team

Ashot Aleksanyan Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Associate Professor

Artyom Tonoyan Expert in Azerbaijani Studies, Assistant Professor at Chair of Iranian Studies, YSU, Doctor of Philosophy in Philology

Carolina Dodon Expert, MA in Human Rights and Democratization at Center for European Studies, YSU

Mariam Khizanashvili Expert, MA in Human Rights and Democratization at Center for European Studies, YSU

Nazira Ibraim kyzy Expert, MA in Human Rights and Democratization at Center for European Studies, YSU

Research Adviser

Vladimir Martirosyan Deputy Director of the Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science, Associate Professor

Readers

Garik Keryan Head of Chair of Political Institutions and Processes, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Alexander Markarov Deputy Vice-rector of YSU, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Political Stability of Newly Independent Countries under Conditions of Modernization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), ed. by Arusyak Aleksanyan, Yerevan, YSU press, 2018, 384 p.

This book presents a comparative analysis conducted through methodology of the Stability Index of Political System and considers transformations and main stages of modernization occurring in the political systems and regimes of newly independent countries, such as Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova. The book includes comprehensive studies of political, economic and social processes as well as situations that impact and condition the stability of the above-mentioned 9 independent countries in a span of 2000-2017. In-country and Cross-country analyses have been carried out within the framework of methodology of the Policy Stability Index. In-country analysis refers to political, economic and social factors trends affecting the stability of the newly independent states within the mentioned period of 2000-2017. Cross-country analysis reveals comparative indicators of political stability in 2017. This book is intended to be used by scholars, experts and students at universities and research centers.

The National Library of Armenia Cataloging-in-Publication Data.

A catalog record for this book is available from the National Library of Armenia and Library of Yerevan State University.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների մասին.....	9
Ներածություն	11
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
Կարարման ամփոփագիր	16
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը. մեթոդաբանություն և արդիականություն	20
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
2. Հայաստանի քաղաքական կայունությունը հետխորհրդային փոխակերպումներում	34
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
3. Քաղաքական իրողությունները և հեռանկարները նորանկախ Վրաստանում	65
<i>Մարիամ Խիզանաշվիլի</i>	
4. Ադրբեջանի քաղաքական կայունության գինը. Ժողովրդավարության հակոտնյաները.....	101
<i>Արփյոմ Տոնոյան</i>	
5. Ռուսաստանի Դաշնության քաղաքական համակարգի կայունության և անկայունության շրջափուլերը.....	148
<i>Աշոֆ Ալեքսանյան</i>	

6. Համակարգային կայունությունը Բելառուսի վարչակարգային ռազմավարություններում	185
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	
7. Ղազախստանի կայունությունն ավտորիտարիզմի և եվրասիական ինտեգրման ճանապարհին	213
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	
8. Ղրղզստանի քաղաքական կայունության իրավիճակը. հետընթացի և առաջընթացի միտումները	250
<i>Նազիրա Իբրահիմ Կիզի</i>	
9. Ուկրաինայի ինտեգրման և եվրոպականացման հնարավորությունները. էթնոկրատի՞զմ, թե՞ ցիվիլիզմ.....	281
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	
10. Մոլդովայի ապակառուցողական երկրնորանքը. արևելքի և արևմուտքի խաչմերուկներում	321
<i>Կարոլինա Դոդոն</i>	
11. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջերկրային վերլուծությունը	352
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
Անունների և հիմնաբառերի ցանկ	368

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արուսյակ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների թեկնածու է, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ: Նա դասախոսում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնում: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են համեմատական քաղաքական վերլուծությունը, քաղաքական կայունության և ժողովրդավարության ինդեքսները, քաղաքական տեխնոլոգիաները: 2009 թ.-ին Արուսյակ Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում մշակել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը, իսկ 2012 թ.-ին ՀՌԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի հետազոտական ծրագրի շրջանակներում՝ Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը:

Աշոտ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ, քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են քաղաքացիական հասարակությունը, սոցիալական գործընկերությունը, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: Նա եղել է ԳԱՓԾ-ի (DAAD) հրավիրված գիտնական Հաննովերի Լայբնիցի և Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյանի համալսարանների քաղաքագիտության ինստիտուտներում ու Բեռլինի ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների ինստիտուտում, ինչպես նաև ԵՄ «Էրազմուս Մունդուս» ծրագրի հրավիրված գիտնական Բելգիայի Լյուվենի կաթոլիկ համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետում և Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի քաղաքագիտության ինստիտուտում:

Արտյոմ Տոնոյանը բանասիրական գիտությունների թեկնածու է, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս:

Ջբաղվում է Ադրբեջանի իրանական լեզուների ուսումնասիրությամբ: Վերջին տարիներին նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում է նաև հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական համակարգի ուսումնասիրությունը:

Կարոլինա Դոդոնը Երևանի պետական համալսարանի և Բուխարեստի պետական համալսարանի (Ռումինիա) մագիստրոս է: Նա ավարտել է Ֆրիդրիխ Էբերթի հիմնադրամի քաղաքական ակադեմիան: Կարոլինան «Բաց կառավարության ինստիտուտ» ՀԿ-ի փորձագետ է և «ԵՄ-ն Մոլդովայի համար» (EU Misc Moldova) ՀԿ-ի նախագահը: Նրա հետաքրքրությունների թեմաներն են քաղաքական հաղորդակցությունները, քաղաքացիական ակտիվիզմ, միջմշակութային կառավարում և փոքրամասնությունների իրավունքները:

Մարիամ Խիզանաշվիլին ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Մարդու իրավունքներն և ժողովրդավարություն» մագիստրոսական ծրագրի մագիստրոս է: Նրա ուսումնասիրության հիմնական ոլորտներն են թվային տեխնոլոգիաները, քաղաքացիական մասնակցությունը և հանրային ծառայությունները: Այժմ նա «Նորարարություն և զարգացում» հիմնադրամում խորհրդատու է:

Նազիրան Իբրահիմ Քիզին ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Մարդու իրավունքներն և ժողովրդավարություն» մագիստրոսական ծրագրի մագիստրոս է և Բուլղարիայի կանանց իրավունքի ուսուցման ինստիտուտի շրջանավարտ: Նա իրավաբան է և քաղաքացիական ակտիվիստ, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն է իրականացնում մարդու սոցիալական և առողջապահական իրավունքների ոլորտում: Նրա հետաքրքրությունների շրջանակում է ընտանեկան բռնության և միջազգային դատավարության առաջադեմ փորձի տեղայնացումը Ղրղզստանում և Կենտրոնական Ասիայի երկրներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորանկախ երկրների քաղաքական համակարգերի կայունությունը համեմատական և կիրառական քաղաքագիտության հիմնահարցերից է, որի համակողմանի ուսումնասիրությունները կանխատեսում են հասարակական փոխակերպումների և արդիականացման միտումները:

Նոր հազարամյակի մարտահրավերները հրատապ են դարձնում համաշխարհային, տարածաշրջանային և ներպետական կայուն զարգացման և անվտանգության հիմնախնդիրները: Մասնավորապես, հետխորհրդային տարածքում առկա հակամարտության գոտիները, քաղաքացիական անհնազանդությունների աճը, հեղափոխություններն ու հեղաշրջումները, ֆինանսատնտեսական ճգնաժամը և այլ հիմնախնդիրներ պատճառ դարձան քաղաքական անկայունությունների շրջափուլերի դրսևորմանը: Մինչդեռ քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունության ապահովումը կայուն առաջընթացի նախապայմաններից է, որում կարևորվում է նաև «իշխանություն-ընդդիմություն» երկխոսությունը ու քաղաքացիական մասնակցությունը:

Քաղաքական գիտությունների զարգացման վերջին ժամանակների ուսումնասիրություններում առանձնակի տեղ են զբաղեցնում չափման գործիքակազմի մշակումն ու ներդրումը: Այս առումով քաղաքական կայունության չափման մոդելի՝ **Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ)**, կիրառումը նորանկախ երկրների ուսումնասիրություններում օգտակար է և արդյունավետ: Անշուշտ, առավել համալիր և բազմակողմանի են այն ուսումնասիրությունները, որոնցում համադրվում են որակական և քանակական մոտեցումները: Դրանք հնարավորություն է տալիս կատարել առավել խորքային և գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություններ՝ վեր հանելով նորանկախ երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկություններն:

Մասնավորապես աշխատության մեջ կիրառված ՔՀԿԻ-ի մեթոդաբանական գործիքակազմը հնարավորություն է տալիս տեղայնացնել միջառարկայական հետազոտությունների տիրույթում առկա ինդեքսները, մոտեցումները, մոդելներն ու տեսությունները: Պետք է նշել, որ ՔՀԿԻ-ի մեթոդաբանության կիրառման առաջին փորձը եղել է 2009 թ.-ին հրատարակված թեմայով «Քաղաքական համակարգի կայունության գնահատման մոդելի մասին (ՀՀ օրինակով)» գիտական հոդվածում: Հետագայում ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ իրականացվել են մի շարք հետազոտություններ, որոնցից է օրինակ՝ 2013 թ.-ին ԵՊՀ-ում հրատարակված «Հարավային Կովկասի, ԵվրԱզԷՍ և ԵՄ անդամ-պետությունների քաղաքական կայունության ինդեքսը (ներերկրային և միջերկրային վերլուծություն)» թեմայով աշխատությունը: Միևնույն ժամանակ այս հրապարակումը կարևորվում է ՔՀԿԻ մեթոդաբանության կատարելագործման և նորանկախ երկրների քաղաքական արդիականացման գործընթացների համեմատական վերլուծության համատեքստում: Այս առումով, աշխատությունում դիտարկված նորանկախ երկրների քաղաքական համակարգերն ունեն կայացման և զարգացման ընդհանրություններ և առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են քաղաքական ընտրանիների և քաղաքացիական հասարակության երկխոսության ու հակադրման գործընթացներում: Զարգացման ընդհանրություններն ու առանձնահատկությունները դրսևորվում են նաև կապված ռեսուրսների տարբերությամբ, քաղաքական մշակույթով և ինքնությամբ, հակամարտությունների լարվածության աստիճանով, սոցիալ-տնտեսական անհամաչափ զարգացմամբ, աշխարհաքաղաքական դաշինքների բևեռացմամբ և ինտեգրման մոդելների ընտրությամբ:

ԵՄ և Հյուսիս-Ատլանտյան դաշինքի ծրագրերը ընդլայնվելով՝ ներառում են նորանկախ երկրները տարբեր ձևաչափերով: Վրաստանը, Ուկրաինան և Մոլդովան խորացնում են իրենց ռազմավարական համագործակցությունը՝ Ասոցացման համաձայնագրի տնտեսական և քաղաքական բաղադրիչների շրջանակում¹: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա այն ունի

¹ Այդ մասին տե՛ս Վրաստանում Եվրամիության պատվիրակության պաշտոնական կայքը՝ https://eeas.europa.eu/delegations/georgia_en/9740/EU/Georgia%20Association%20Agreement (11.08.2018), Ուկրաինայում Եվրամիության պատվիրակության

առանձնահատուկ կարգավիճակ եվրոպական և եվրասիական ինտեգրման մոդելներում՝ փորձելով համադրել երկկողմանի և բազմակողմանի կապերն ու հարաբերությունները: Պետք է նշել, որ Հայաստանը, լինելով ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամ, ԵՄ-ի հետ բանակցությունների ավարտին հաջողեց ստորագրել «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»²: Միևնույն ժամանակ Ադրբեյջանը նախապատրաստվում է ԵՄ-ի հետ բանակցությունների հետ նոր շրջափուլին՝ եվրասիական հարթակում նախընտրելով երկկողմանի հարաբերությունների խորացում Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի հետ:

Հայաստանն ու Արցախը գտնվելով Ադրբեյջանի հետ չկարգավորված հակամարտության մեջ՝ լուրջ խոչընդոտների են բախվում ինտեգրման գործընթացներում: Վերջինիս դրսևորումներից է ռազմական ծախսերի ավելացումն ու սպառազինությունների մրցավազքը:

ԵԱՏՄ անդամ երկրները փորձում են տնտեսական տարբեր ընթացակարգերի միջոցով ապահովել փոխշահավետ համագործակցություն և միասնականություն, որը բախվում է անցումային տնտեսություններին բնորոշ մի շարք խոչընդոտների: Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը, ունենալով բավարար բնական ռեսուրսներ և տնտեսական կապեր, եվրասիական տնտեսական շուկայում առավելապես ձգտում են գերակա դիրքերի հաստատմանը, այլ ոչ թե համագործակցությանը: Այս առումով, Հայաստանը և Ղրղզստանը ԵԱՏՄ-ում հայտնվել են ոչ շահավետ պայմաններում՝ չկարողանալով օգտվել և լիարժեքորեն իրացնել համագործակցության ողջ ներուժը:

Ընդհանուր առմամբ, նորանկախ երկրների քաղաքական համակարգերի կայունությունը պայմանավորված է պետականակերտման գործընթացներով, որոնցում առկա բախումները վտանգում են ներհասարակական և տարածաշրջանային համերաշխությունը: Դիտարկվող հիմնախնդիրների

պաշտոնական կայքը՝ https://eeas.europa.eu/node/10420_en (11.08.2018), Մոլդովայում Եվրամիության պատվիրակության պաշտոնական կայքը՝ https://eur-lex.europa.eu/legal-content/ro/TXT/?uri=uriserv:OJ.L_.2014.260.01.0004.01.ENG (11.08.2018):

² Այդ մասին տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքը՝ <https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf> (11.08.2018):

համատեքստում, տեղին է նշել, որ տարածաշրջանային կայունությանը խոչընդոտում են ՌԴ-ի լարված հարաբերությունները ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական երկրների, ինչպես նաև ԵՄ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և այլ կառույցների հետ:

Այսպիսով՝ աշխատանքի շրջանակում կատարված հետազոտության նպատակն է գնահատել նորանկախ երկրների Քաղաքական համակարգերի կայունության ինդեքսի և դրա երեք բաղադրիչների՝ Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսների միտումներն արդիականացման պայմաններում: Ուսումնասիրության ժամանակահատվածը ներառում է հետխորհրդային պետությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներն անկախացումից սկսած՝ առավել մանրամասն կենտրոնանալով, սակայն նոր դարաշրջանի զարգացումների վրա:

Աշխատանքը բաղկացած է ներերկրային և միջերկրային վերլուծություններից:

Ներերկրային վերլուծությունը ներառում է յուրաքանչյուր առանձին պետության Քաղաքական համակարգի կայունության (ՔՀԿԻ) և դրա վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների ինդեքսների (Ք_{ԳԻ}, Տ_{ԳԻ} և Ս_{ԳԻ}) միտումները 18 տարվա կտրվածքով (2000-2017 թթ.):

Միջերկրային վերլուծությունը հետխորհրդային 9 երկրների ՔՀԿԻ-ի և այն պայմանավորող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների ինդեքսների համեմատական ուսումնասիրությունն ու սանդղակավորումն է 2017 թ.-ի կտրվածքով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, կատարման ամփոփագրից, տասնմեկ գլխից, ինչպես նաև անունների և հիմնաբառերի ցանկերից: Առաջին գլխում ներկայացված է քաղաքական համակարգի կայունության չափման մոդելի մեթոդաբանությունը: Երկրորդից տասներորդ գլուխներում, քննարկվում են ներերկրային վերլուծության արդյունքները, մասնավորապես Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Մոլդովայի քաղաքական համակարգի կայունության և այն պայմանավորող քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների միտումները 2000-2017 թթ.: Տասնմեկերորդ գլխում ներկայացված են միջերկրային վերլուծության արդյունքները:

Ներածություն

Դրա շրջանակում կատարված է վերոնշյալ պետությունների հաշվարկված Քաղաքական համակարգի կայունության միջերկրային ինդեքսի համեմատական վերլուծությունն ու սանդղակավորումը 2017 թ. կտրվածքով: Նշված գլխում ներկայացված են նաև ՔՀԿԻ-ի երեք ենթահինդեքսների՝ Ք_{ԳԻ}-ի, S_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի վարկանիշային աղյուսակները:

ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ